Հ ԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՏՆՕՐԵՆ՝ Ա.Հարությունյան

<< 01 >> սեպտեմբերի 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Աբովյանի Խ.Աբովյանի անվան N1 ավագ դպրոց

12գ դասարան

Դասղեկ՝Ա.Հարությունյան

<<____2022_____ _____2023_____>> ուսումնական տարի

32					
33					
34					

ԿՐԹԱԿԱՆ- ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XIգ դասարանում սովորում են 19 աշակերտներ: Բոլորն էլ կազմակերպված, դաստիարակված, խելացի, աշխույժ, կյանքով լի երեխաներ են: Ընկերասեր են, հարգում են միմյանց, ունեն արժանապատիվ կեցվածք: Սովորում են իրենց ուժերի ներածին չափով:

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսումնադաստիարակչական նպատակով պարբերաբար հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ, ծնողներին ևս մասնակից դարձնել ուսումնական գործընթացին: Կոլեկտիվում պահպանել համերաշխություն, խրախուսել լավ սովորող ու կարգապահ աշակերտներին: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (մաքրություն, կարգապահություն, աշխատասիրություն, համագործակցություն):

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր արժեքներ՝ հող, հայրենիք, լեզու, ծնող, հավատ, ավանդույթներ: Զրույցներ հայրենասիրության, հավատի, մեր ժողովրդի հավերժության, մայրենի լեզվի անաղարտության և այլ թեմաներով: Հոգևոր արժեքները որպես մեր ժողովրդի հավերժության գրավականներ:

3.2գեղագիտական դաստիարակություն

Արվեստի դերը մարդու ձևավորման գործում, անձի ստեղծ. և հոգևոր ներաշխարհի, գեղեցիկի ընկալում: Երեխաների գեղագիտական ճաշակի ձևավորման համար այցելություն տարբեր մշակութային վայրեր:

3.3 ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Օգնել երեխաներին գալ այն համոզման, որ իրենք հայրենիքի զինվորներ են և իրենց ուսմամբ և աշխատանքով և հետագայու նան ծառայելով պիտի նվիրվեն հայրենիքին: Հայրենիքը կանգուն է զինվորներով:

3.4 ֆիզիկական դաստիարակություն

Խրախուսել երեխաների մասնակցությունը տարբեր սպորտային խմբակների, որովհետև առողջ ոգի կարող է լինել միայն առողջ մարմնում:

3.5 աշխատանքային դաստիարակություն

Աշխարհը աշխատանքով է կանգուն, մարդը գեղեցիկ է արարմամբ: «Մարգարիտը վերքից է, որ կծնի, և խունկը այրվելով է, որ իր անուշ հոգին կբուրե»: Ամեն ոք պետք է մասնակցի հայի արարմանը:

3.6բնապահպանական դաստիարակություն

Զրույց էկոլոգիայի մասին: Պահպանենք բնությունը:

Զրույց «Կանայքների ընկերության» մասին:

4.ԴՊՐՈՑ- ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Ամուր պահել կապը ծնողների հետ: Ծանոթանալ յուրաքանչյուր սովորոզի ընտանեկան վիճակին, սոցիալական վիճակին, պայմաններին և հնարավորինս օգնել:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ւսումնական Շաբաթներ՝	Ուսումնադաստիարակչական աշխատանքերի բովանդակությունը	Կատարման Ժամկետը	կատարողներ
X/2022	<<Գիտելիքը ուժ է >>: Պայքար COVID 19-ի դեմ		
X/2022	<<Իմ իրավունքները և պարտականությունները >>: Դպրոց հաճախելու կանոններ		
IX/2022	Հաճախումներ, աշակերտական կազմի և նախագահի ընտրություն		
IX/2022	Դաստիարակել միասնական, համախմբված կոլեկտիվ		
IX/2022	Պայքարել գիտակցական կարգապահության և որակական առաջադիմության համար		
X/2022	Զրույց «Արժանապատվություն» թեմայով		
X/2022	Զրույց «Որն է կյանքում իմ կոչումը»		
X/2022	Զրույց «Իմ իրավունքներն ու պարտականությունները»		
XI/2022	Զրույց «Ինչն է անհանգստացնում»		
XI/2022	Զրույց «Ինչն է ինձ ուրախացնում» թեմայով		
XI/2022	Զրույց «Ինչպես քաջալերել աշակերտներին»		
XI/ 2022	Կազմակերպչական հարցեր		
XII/2022	Զրույց «Ես» թեմայի շուրջ		
XII/2022	Ինչ է հայրենասիրությունը		
XII/2022	Տոներ և ավանդույթներ:		
XII/2022	I կիսամյակի ամփոփում		